

հաւաքէ: Սելովամի աւազանը մէկ անգամ միայն յիշուած է Հին Կտակարանին մէջ, իր յատուկ անունով: Նեեմի Բ. 14. Դ. 15 համարներուն մէջ կը յիշուին Նեեմիի աղբիւրին զուռը եւ Սելովամի աւազանին պատը թագաւորին պարտէզէն եւ Դաւթի քաղաքէն իջնող աստիճաններու մօտ, 1896ին գտնուած դրան հիւսիս-արեւելքէն 60 մէթր հեռի և որ Նեեմիի աղբիւրին զուռն ըլլալու երևոյթը ունի: Այս նշանները ցոյց կու տան թէ աղբիւրը և աւազանը մեծ հնութիւն մը ունին: Նոյն աւազանին հարաւային կողմը շինուած է անցարգել պատ մը, որ կը տարածուի Ոփալի բլուրին հարաւային ծայրէն մինչև Սրոնի արեւմտեան լեռը, 90 մէթրի չափ: Այս պատը երկուքուկէս մէթր թանձրութիւն ունի, վեց մէթր լայնութեամբ հիման վրայ: Պատին մօտ գտնուած են ուրիշ հաստահիմն կառուցուածքներ՝ թումբին հաստատութեան ծառայելու համար:

Սելովամի այն աւազանը, ուր մեր Փրկչին կողմէ ի ծնէ կոյրը զրկուեցաւ, աւանդութեան մը համաձայն, այն տեղն է, ուրկէ ջրմուղը կը վազէ: Հոն կը տեսնուի աւազան մը, որուն պատերը այժմ խարխլած են, երկայնութիւնն է տասնհեհինգ մէթր, լայնութիւնը հինգ. նոյն չափ ալ խորութիւնը: Աւազանի մէջ կը տեսնուին սիւնի բեկորներ: Բնիկները կը կոչեն զայն Birket-Siloan: Բրոֆ. Bliss 1896ին իր պեղումներու առիթով հոն գտած է մեծ աւազանի մը մնացորդները, որուն մէկ մասն է վերև յիշուածը: Գտնուած աւազանը քառակուսի է, հիւսիսէն հարաւ քսաներկու մէթր, արեւելքէն արեւմուտք քսաներեք, բարձրութիւնը հինգուկէս: Հիւսիսային կողմը աւազանին մօտ կար մէկ կոնքով (nef) եկեղեցի մը:

1880ին այս ջրմուղին մէջ դիպուածով գտնուած է փիւնիկեան գիրով երբայական արձանագրութիւն մը, որ կը պատմէ այս ջրմուղին պեղումի մասին տեղեկութիւններ: Այս արձանագրութիւնը քանդակուած է տասն մէթր հեռաւորութեամբ արեւելեան ներսակողման վրայ: Հոս կը դնենք այդ արձանագրութիւնը, Joseph Derenbourgի Ֆրանսերէն (R. J. N^o. 6. նոյ. դեկտ. 1881) թարգմանութեան համաձայն հայերէնի վերածելով զայն:

«Պեղումն վերջ: Եւ անա՛ ինչ որ կը վերաբերի այս պեղումի մասին: Երբ գործաւորները ֆարհասը (pic) կը շարժեին մին միւսին յիսնսց, երբ ասիւսին ետե՛ կանգուն կը մնար ժայռը պստեղու, կը